ԱրՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Սեպտեմբերի 21-ին, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն, որին մասնակցում էին ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը, ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը, «Պահեստազորի սպաներ» ՀԿ հիմնադիր-նախագահ, պահեստազորի փոխգնդապետ Կարմեն Ասլանյանը:

Խորհրդակցությանը քննարկվել են ԱրՊՀ-ում «Պատիվ ունեմ» ծրագրի և ռազմական ամբիոն ստեղծելուն վերաբերող հարցեր:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, կարևորելով բուհում ռազմական ամբիոն ստեղծելու գաղափարը, ընդգծել է ամբիոնի անհրաժեշտությունը՝ Արցախի Հանրապետության քաղաքական կարգավիճակի տեսանկյունից և նշել, որ ամբիոնը կլինի սպայական կազմը համալրելու լավագույն դարբնոց:

«Պահեստազորի սպաներ» ՀԿ հիմնադիր-նախագահ, պահեստազորի փոխգնդապետ Կարմեն Ասլանյանը, խոսելով ծրագրի կարևորության մասին, նշել է, որ պահեստազորի սպաները պատրաստ են աջակցելու ծրագրի գործարկմանը, որի ուղղությամբ արդեն որոշակի աշխատանքներ են իրականացրել:

ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանն իր խոսքում ընդգծել է, որ «Պատիվ ունեմ» ծրագրի գաղափարախոսությունը բարձր գաղափարախոսություն է, որն ուղիղ կապված է ուսանողների ապագան սպայական ծառայության հետ կապելուն:

«Մենք աշխատելու ենք, որ այդ ապագան լինի գրավիչ, արժանապատիվ, և այն կարող է կրել սոցիալական բաղադրիչ, բայց այն չպետք է ուսանողներին խրախուսի որպես սոցիալական բաղադրիչ: Սա կարևոր ծրագիր է, որովհետև մեր երկրի ելման կետը անվտանգությունն է»,-ասել է նախարարը:

Խորհրդակցության ընթացքում նախանշվել են ծրագրի գործարկման ուղղությամբ անելիքները: Պատասխանատուների խոսքով՝ ծրագիրը կմեկնարկի նոր ուսումնական տարվանից:

ԱրՊՀ-ՈՒՄ ՆՇՎԵԼ Է ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Սեպտեմբերի 13-ը նշվում է որպես Ծրագրավորողի միջազգային օր: ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետում կազմակերպվել է միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ՝ նվիրված Ծրագրավորողների միջազգային օրվան:

Ողջունելով ներկաներին՝ «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ամբիոնի վարիչ Վ. Առստամյանը ուսանողներին շնորհավորել է Ծրագրավորողի միջազգային օրվա առթիվ՝ կարևորելով ծրագրավորողի մասնագիտությունն ու նրա դերը:

Միջոցառման նախաձեռնությունը «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ամբիոնինն էր, կազմակերպչական աշխատանքներով զբաղվել են ամբիոնի դասախոս Դիանա Իսրայելյանը և «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Անի Հակոբյանը: Միջոցառմանը մասնակցում էին տարբեր կուրսերից հավաքական թիմեր: Հաղթող թիմի անդամները խրախուսվել են նվերներով և պատվոգրերով: «Նման միջոցառումները արդեն ավանդական բնույթ են կրում: Ուսանողները սիրով են մասնակցում նման միջոցառումներին, որոնք մասնագիտական գիտելիքներ են հաղորդում ուսանողներին և զարգացնում տրամաբանությունը»,-նշել է Ա. Հակոբյանը:

«ԱրՊՀ-ում ունենք բազմաթիվ ուսանողներ, ովքեր ուսմանը զուգահեռ աշխատում են ծրագրավորմամբ զբաղվող տարբեր ընկերություններում, ինչը վկայում է, որ մեր ուսանողներն ունեն մասնագիտական բարձր պատրաստվածություն»,-նշել է «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ամբիոնի վարիչ Վազգեն Առստամյանը՝ հավելելով, որ ամբիոնի կողմից ամեն ինչ արվելու է, որպեսզի ուսանողները ստանան որակյալ կրթություն և դառնան աշխատաշուկայի պահանջներին բավարարող մասնագետներ:

²ðò²Ê ÆÊ³Ø²Êº²ð²Ü

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 04 (227)
սեպտեմբեր, 2020

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծվել է պատերազմ:

Արցախի Հանրապետության Նախագահի որոշմամբ երկրում հայտարարվել է ռազմական դրություն: ԱՀ ԿԳՄ նախարարի հրամանով բոլոր ուսումնական հաստատություններում, այդ թվում նաև Արցախի պետական համալսարանում, անորոշ ժամանակով դադարեցվել են ուսումնական պարապմունքները:

Սեպտեմբերի 28-ին Արցախի պետական համալսարանում ռեկտոր Արմեն Սարգսյանի ղեկավարությամբ տեղի է ունեցել ռեկտորատի արտահերթ նիստ՝ կապված Արցախում տիրող ռազմական դրության հետ: Նիստի ընթացքում կայացվել է որոշում՝ համալսարանականներից կամավորական խմբեր կազմավորելու՝ թիկունքային աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

Աշխարհի ողջ հայությունն ու քաղաքակիրթ մարդկությունը շտապեցին իրենց նպաստը բերել Արցախին ու Արցախի ժողովրդին: Հայ զինվորը անպատկերացնելի խիզախություններ է գործել առաջնագծում: ԱրՊՀ տղա ուսանողները ևս առաջին իսկ պահից կամավորագրվեցին և շտապեցին առաջնագիծ՝ իրենց նպաստը բերելու հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

***

Արցախի դեմ հակառակորդի սանձազերծած պատերազմին առաջին իսկ պահից իրենց նպաստն են բերել նաև Արցախի պետական համալսարանի կամավորականները. տղաները՝ առաջնագծում զենքը ձեռքներին, աղջիկներն ու կանայք՝ թիկունքային աշխատանքներում: Թիկունքային աշխատանքներին սիրով ու նվիրվածությամբ են մասնակցել նաև մեր դասախոսներն ու բուհի մյուս աշխատակիցները:

Մեր ուսանող մարտիկները

Երբ հայրենիքը վտանգվեց, առաջին իսկ պահից նրանք գրիչը փոխարինեցին զենքով և կամավորագրվեցին հայրենիքի պաշտպանության սուրբ գործին, որը նրանց համար ամեն ինչից վեր է: Նրանք ինչքան համեստ և ուշիմ են լսարանում, այնքան ըմբոստ և խիզախ են առաջնագծում: Հերոսության ու սխրագործության աներևակայելի ու դեռ գրքերում չգրված պատմություններ են կերտել իրենց իսկ կենսագրությամբ՝ աշխարհին ցույց տալով, թե ինչ է իրական մարդասիրությունը, հայրենասիրությունը՝ վտանգելով սեփական կյանքերը: Հպարտ ենք ձեզնով, մեր քա՛ջ տղաներ:

ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի և դպրության օրվա առթիվ: Այսօրը տոն է բոլոր նրանց համար, ովքեր իրապես արժևորում են գիտելիքը և իրենց ամեն մի օրը ծառայեցնում գիտելիքների անսահման աշխարհում առաջ շարժվելուն:

Անցած ուսումնական տարին լի էր աննախադեպ մարտահրավերներով, որոնք համատեղ ուժերով կարողացանք հաղթահարել: Աշխարհը մոլեգնած համավարակի պատճառով կարողացանք ավանդական կրթաձևին համակցել նաև առցանց ձևաչափը, ինչը նորույթ էր մեր կրթական դաշտում: Ստեղծածը տարեցտարի բազմապատկելու ավանդույթ կա ձևավորված Արցախի մայր բուհում, ինչն էլ գրավականն է բարձրագույն կրթության անընդհատական զարգացման: Ուրախությամբ ուզում եմ նշել, որ նոր ուսումնականը սկսում ենք այդ զարգացմանը նոր թափ հաղորդող մի մեծ ծրագրով՝ ԱՀ Նախագահի ծրագրային դրույթներից բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման ծրագրի ներդրմամբ, որը խարսխված կլինի որակի ապահովման վրա: Սա առաջին հերթին խոսում է այն մասին, որ բարձրագույն կրթությունը և որակյալ մասնագետների պատրաստումը գտնվում է երկրի ղեկավարի անմիջական ուշադրության կենտրոնում, ինչը պարտավորեցնող է, և յուրաքանչյուրիդ ակնկալվում է դառնալ բարձրորակ, պահանջարկ ունեցող, մրցունակ մասնագետ:

Առանձնահատուկ շնորհավորում եմ առաջին կուրսեցիներին, ովքեր կատարել են արդեն իրենց կյանքի ամենակարևոր քայլերից մեկը՝ ընտրելով Արցախի մայր բուհը:

Մաղթում եմ բոլորիդ արդյունավետ օգտագործել ձեզ ընձեռված ժամանակն ու հնարավորությունները՝ այդ ամենը ծառայեցնելով գիտելիք ամբարելու անսպառ գործընթացին:

Համավարակի պայմաններում կոչ եմ անում նաև բոլորիդ պահպանել առողջությունը և հետևել հակահամաճարակային ցուցումներին: Առողջ եղեք և գիտելիք ստանալը դարձրեք նպատակ:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՃԱՆԱՉԻ՛Ր ԱՐՑԱԽԸ» ԾՐԱԳԻՐԸ

Արցախի պետական համալսարանում մեկնարկել է «Ճանաչի՛ր Արցախը» խորագիրը կրող արշավների ծրագիրը: Այն հայրենաճանաչողական և բնապահպանական բնույթ է կրում: Ծրագրի շրջանակներում համալսարանական և ֆակուլտետային տարբեր խմբեր այցելել են «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոց, Վանքասար, Դիզափայտ, Հունոտի Կիրճ, Ամարաս, Դադիվանք, Երիցմանկանց վանք: Այս շարքը շարունակական է լինելու և բակալավրիատի առկա համակարգում սովորող բոլոր ուսանողները հնարավորություն են ունենալու մեկ անգամ օգտվելու արշավների ծրագրից:

«ՃԱՆԱՉԻՐ ԱՐՑԱԽԸ» ԱՐՇԱՎՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԱրՊՀ-ում շարունակվում է «Ճանաչի՛ր Արցախը» խորագիրը կրող արշավների ծրագիրը: Սեպտեմբերի 18-ին մի խումբ ուսանողներ ուղևորվել են դեպի Տնջրի և Ամարասի վանական համալիր: Այցելությունը և՛ ճանաչողական էր, և՛ ուսուցողական: Արշավի հերթական խմբի անդամները ծանոթացան Արցախի պատմամշակութային վայրերին և մեծ համախմբվածությամբ ու պատրաստակամությամբ մաքրեցին շրջակա տարածքը:

«Աշխարհագրություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Ասրյանը կիսվել է օրվա տպավորությամբ և նշել, որ լավ մասնագետ դառնալու ամենամեծ նախադրյալներից մեկը հայրենաճանաչողությունն է, և ուսանողների այս մեծ ու կարևոր պահանջմունքը բավարարելու համար արշավների կազմակերպումը հիանալի միջոց է:

«Այսօր ԱրՊՀ ուսանողության հետ նորովի բացահայտեցինք մեր պատմական հզոր հիմքերն Ամարասում: Անհավանական զգացողությունների տեղատարափ էր, ևս մեկ անգամ հպարտություն ապրեցի, որ հայ եմ, քրիստոնյա եմ»,-ասել է Մ. Ասրյանը:

«Կառավարում» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Վիկտորյա Երեմյանը իր երախտագիտությունն է հայտնել ծրագրի կազմակերպիչներին և նշել. «Շնորհակալ ենք Արցախը նորովի բացահայտելու և ուսանողությանն այդ ծրագրի մի մասնիկը դարձնելու համար»:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Սեպտեմբերի 24-ին ԱրՊՀ-ում համագործակցության հուշագիր է ստորագրվել «Սիներջի Սիսթեմս» և «Կապիտալ Սոֆթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը բարձր է գնահատել ընկերությունների հետ այս տարիների ընթացքում գործընկերային հարաբերությունները, որոնք եղել են արդյունավետ առաջին հերթին ուսանողներին գիտելիք փոխանցելու և բուհի շրջանավարտներին աշխատանքով ապահովելու տեսանկյունից:

«Սիներջի Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Միքայել Սարգսյանի խոսքով՝ ԱրՊՀ-ի հետ համագործակցությունը տարիների պատմություն ունի, և հուշագրով այդ գործակցությունն ամրագրվում է:

«Մեր ընկերության մասնագետները ԱրՊՀ-ում պարբերաբար հանդես են գալիս դասախոսություններով, և դրանք հիմնականում երկու նպատակ են հետապնդում. առաջին՝ գիտելիք փոխանցել ուսանողներին և երկրորդ՝ այն ուսանողները, ովքեր հետաքրքրված են ոլորտով և ունեն անհրաժեշտ գիտելիքներ, վերապատրաստվեն ընկերությունում, ու հետագայում դառնան ընկերության աշխատակիցները»,- ասել է Մ. Սարգսյանը:

«Կապիտալ Սոֆթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Մնացականյանը, կարևորելով հուշագրի ստորագրումը, նշել է, որ հուշագրով բուհի հետ համագործակցությունը զարգացման նոր փուլ կմտնի, որը երկուստեք կլինի արդյունավետ:

Փոխգործակցության հուշագրի նպատակն է համատեղ ուժերով նպաստել բուհում կրթական համակարգի զարգացման գործընթացին, երիտասարդ մասնագետների համար ստեղծել նորագույն տեխնոլոգիաների միջոցով տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման և խորացման հնարավորություններ, հաստատել փոխշահավետ, բազմաբնույթ համագործակցային հարաբերություններ:

Հուշագրի շրջանակներում ընկերություններում անց են կացվելու ուսանողների արտադրական և ուսումնական փորձուսուցումները, ընկերությունների աշխատակիցների ներգրավմամբ կազմակերպվելու են մասնագիտական առարկաների համատեղ դասավանդում, ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարում, համատեղ իրականացվելու են գիտահետազոտական աշխատանքներ, աշխատանքային այլ ծրագրեր, գիտամանկավարժական գործունեության արդյունքների համատեղ քննարկում և գնահատում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԿԻՆՈՍՑԵՆԱՐԻՍՏ, ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ ՍԼԱՎԻ-ԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ

ԱրՊՀ-ում կազմակերպվել է հանդիպում բանաստեղծ, կինոսցենարիստ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Սլավի-Ավիկ Հարությունյանի հետ:

Նա նշել է, որ, ապրելով Արցախից դուրս, ոչնչով չի տարբերվում տեղացիներից և իր մեջ կրում է Արցախից մի մասնիկ: Նա իր ընթերցողներին խորհուրդ է տալիս դուրս գալ սեփական փակ մշակույթից և չվախենալ օվկիանոս թափվելուց, քանի որ թափվելուց հետո կհասկանան, որ այդ օվկիանոսը

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԱրՊՀ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ 523 ՈՒՍԱՆՈՂ. ԱրՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ

2020-2021 ուսումնական տարում ԱրՊՀ բակալավրիատ է ընդունվել 525 ուսանող, որից 415-ը՝ առկա, 110-ը՝ հեռակա ուսուցման համակարգ: Չևավորված ամենամեծ խմբերը համապատասխանաբար «Ֆինանսներ ըստ ոլորտի», «Ֆիզդաստիարակություն և սպորտ», «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություններից են, իսկ «Քիմիա» մասնագիտության 1-ին կուրսը կգործի մեկ ուսանողով:

Արցախի պետական համալսարանում սեպտեմբերի 1-ին տոնական տրամադրություն էր տիրում: Վաղ առավոտից մայր բուհը դիմավորել է առաջին կուրսեցիներին: Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները կազմակերպել են դիմավորման և իրազեկման աշխատանքները, ուսանողներին ուղեկցել լսարաններ, ծանոթացրել դասացուցակներին, որից հետո նրանց հետ հանդիպում են ունեցել ֆակուլտետների դեկանները և կուրսղեկները:

Բարձր առաջադիմությամբ ընդունված առաջին կուրսեցիները հանդիպում են ունեցել համալսարանի ռեկտորի և պրոռեկտորների հետ: Ռեկտոր Ա. Սարգսյանը ողջունել է բոլոր առաջին կուրսեցիներին, շնորհավորել Գիտելիքի և դպրության օրվա առթիվ: Նա նշել է, որ նոր ուսումնական տարում համալսարանում ուսուցումը բակալավրիատի ուսանողների համար կլինի կենդանի՝ ոչ հեռավար:

«Ոչ ոք երաշխավորված չէ համավարակի նոր թափից, և մենք, հարկ եղած դեպքում, պետք է կարողանանք կարճ ժամանակահատվածում անցնել հեռավար ուսուցման: Բոլորին հորդորում եմ ակտիվ մասնակցել այդ ուղղությամբ տարվող գործընթացներին՝ ստեղծված իրավիճակը փառքով հաղթահարելու համար»,- նշել է ռեկտոր Ա. Սարգսյանը՝ հավելելով, որ համալսարանը ներկայումս գտնվում է հավատարմագրման գործընթացում և այն հաղթահարելուց հետո դառնալու է միջազգային բուհական համակարգի լիարժեք անդամ: Ուսանողները իրազեկվել են նաև հեռավար ուսուցման նոր հարթակի ներդրման, կրեդիտային համակարգի, վարձավճարի փոխհատուցման և զեղչային համակարգի մասին:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը հորդորել է առաջին կուրսեցիներին հնարավորինս ակտիվ լինել և ներգրավվել առաջիկայում նախատեսվող ուսումնական, գիտական, ինտելեկտուալ և մշակութային միջոցառումներում:

«Կառավարում» մասնագիտության առաջին կուրս ընդունված ուսանող Վահե Ասրյանը կիսվել է իր առաջին տպավորությամբ և նշել. «Ուրախ եմ, որ հենց Արցախի մայր բուհի ուսանողն եմ և ուզում եմ շնորհակալություն հայտնել համալսարանի ամբողջ անձնակազմին այսպիսի ընդունելության համար: Առաջին կուրսեցիներին մաղթում եմ հաջողություններ ուսման բնագավառում, աշխատասիրություն և նպատակասլացություն, որպեսզի կարողանանք մեր ընտրած մասնագիտությունը արժանվույնս ծառայեցնել մեր հանրապետությանը»:

«Լրագրություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Անի Աբաղյանը շնորհավորել է բոլոր ուսանողներին՝ մաղթելով ակտիվ և բեղուն ուսանողական տարիներ:

ԱրՊՀ համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչները ըստ ֆակուլտետների հանդիպումներ ունեցել են ուսանողության հետ և կատարել իրազեկման ակտիվ աշխատանքներ:

ԱրՊՀ-ՈՒՄ ՆԵՐԴՐՎԵԼ Է ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿ

Օգոստոսի 17-ից ԱրՊՀ-ում մեկնարկել է աշխատաժողով, որը վարում է ՀՀ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանը: Աշխատաժողովին մասնակցում էին համալսարանի պրոռեկտորներ, ստորաբաժանումների ղեկավարներ, կրթության կազմակերպման գործընթացի պատասխանատուներ:

Ներդրվող էլեկտրոնային ուսուցման նոր հարթակը հնարավորություն կտա ուսուցման ավանդական ձևը համադրել առցանց եղանակին՝ նպաստելով ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Ա. Սարգսյանը աշխատաժողովի ընթացքում ներկայացրել է «Google for Education» հարթակի «Google Classroom» հավելվածը, առանձնահատկությունները, գործիքակազմը, առավելությունները, որոնք կընձեռեն նոր հնարավորություններ կբացվեն էլեկտրոնային ուսուցման ոլորտում:

Բանախոսը նշել է, որ Արցախի պետական համալսարանն արդեն բավականին աշխատանքներ է իրականացրել առցանց ուսուցման հարթակի ներդրման ուղղությամբ:

«Արցախի պետական համալսարանը Google-ի հետ արդեն կնքել է պայմանագիր և ստացել լիցենզիա՝ կիրառելու Google-ի կրթական համակարգը, որն ունի բոլոր հավելվածները և հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են ուսումնական գործընթացն առցանց տեղափոխելու համար: Սա բոլորովին չի նշանակում, որ ամբողջ գործընթացը լինելու է առցանց, այլ ստեղծվում է հնարավորություն՝ ավանդական լսարանային պարապմունքները համակցելու էլեկտրոնային հարթակին»,-նշել է բանախոսը:

Մեկ շաբաթվա ընթացքում Անուշ Սարգսյանը ԱրՊՀ-ում անց է կացրել աշխատաժողովներ ֆակուլտետների պատասխանատուների, ամբիոնների վարիչների, աշխատակիցների մասնակցությամբ՝ էլեկտրոնային ուսուցման հարթակի ներդրման ուղղությամբ գործնական հմտություններ և կարողություններ փոխանցելու, ամրապնդելու նպատակով:

«Առաջին անգամ եմ Արցախում, Արցախի պետական համալսարանում, տպավորված եմ Արցախով: Էլեկտրոնային ուսուցման հարթակը ԱրՊՀ-ում ներդնելու ուղղությամբ պատրաստ եմ համալսարանին աջակցել ոչ միայն այս մեկ շաբաթվա ընթացքում, այլ նաև հետո՝ մինչև ամբողջությամբ և լիարժեքորեն այն գործարկվելը»,-նշել է ՀՊՄՀ կրթության կառավարման բաժնի պետը:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել բանախոսին և ՀՀ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին՝ արդյունավետ համագործակցության համար:

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արցախի պետական համալսարանում առաջին կուրսեցիների հետ իրազեկման ակտիվ աշխատանքներ են տարվում: Ըստ ֆակուլտետների հանդիպումներ են կազմակերպվել ուսանողության հետ, նրանց ծանոթացրել համալսարանական ներքին կանոններին ու կառույցներին: Ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը ուսանողներին ներկայացրել է էլեկտրոնային նոր հարթակի հնարավորությունները, իրազեկել համալսարանական ներքին կանոնների մասին՝ հորդորելով բոլոր ուսանողներին հուզող հարցերի դեպքում բարձրաձայնել և դիմել համապատասխան ստորաբաժանումներին:

«Ուսումնասիրեք ձեր իրավունքներն ու պարտականությունները, տիրապետեք դրանց: Ձեզնից է կախված մայր բուհի վարկանիշը, ուստի պահաջատեր եղեք գիտելիքների ձեռք բերման հարցում»,- իր խոսքում նշել է Վ. Յարամիշյանը՝ հավելելով, որ ակտիվ ուսանողական տարիներ ունենալու համար ընդգրկվեն ուսանողական տարբեր խմբերում և իրենց դրսևորեն լավագույն հատկանիշներով: Հանդիպման ընթացքում պրոռեկտորը անհրաժեշտ տեղեկություն է հաղորդել ուսումնական գործընթացի վերաբերյալ, պատասխանել նրանց հարցերին:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի պատասխանատու Վ. Գալոյանը ուսանողներին ներկայացրել է, թե ինչպես են կազմակերպվում ուսանողական ակտիվ միջոցառումները համալսարանում և ինչպես կարող են ցանկացողները ընդգրկվել: Նա նշել է նաև առաջիկայում նախատեսվող միջոցառումների մասին՝ ակնկալելով, որ առաջին կուրսեցիները նախորդ տարիների ուսանողների պես կփայլեն իրենց նախաձեռնողականությամբ և ակտիվությամբ:

«Ճիշտ և տեղին օգտագործեք ձեզ ընձեռված հնարավորություններն ու թանկ ժամանակը: Ուսանողական տարիները ձեր կյանքի ամենահիշվող տարիներն են լինելու, և դրանց լիարժեք կազմակերպումը կախված է լինելու միայն ձեզնից»,-նշել է Վ. Գալոյանը: